

համայնք կը վայելէին շատ մը Տնօրինական Ս. Տեղեր՝ որոնց պահպանումին ու պայծառութեան կը հսկէին: Բիւզանդական շրջանին Հայոց յասուկ էր Սիոնի նախապարհին վրայ գտնուած փողոցը՝ որուն *Ruga Armeniorum* անունը կու տային միշին դարու մէջ, եւ ան կը սանէր մինչեւ Սիոնի եկեղեցին, զոր կը յիշատակէ *Raade* իր Պետրոս վրացիին գերմաներէն կենսագրութեան մէջ (Տե՛ս էջ 45-46): Այս պատմական տեղեկութիւնը կը փառենք նոյն Մասապայի այն մոզայիք ֆարեստ — յիշատակարանէն որ Զ. դարուն շինուած էր — եւ ան հրաշալիօրէն կը համադրէ ինչ որ պատմութիւնը եւ ուղեգիրները կը սորվեցնեն մեզ Երուսաղէմի ներքին դիրքին եւ գլխաւոր արքայաբերու մասին, որ հոն կը գտնուէին՝ երբ Երուսաղէմ իր փառքին զենիքին վրայ էր: Մասապայի այս մոզայիք ֆարեստը ի մէջ այլոց ցոյց կու տայ նաեւ Հայոց Կայիափայի տան տեղւոյն վրայ շինած եկեղեցին՝ որ Ս. Պետրոս եկեղեցի անուամբ ալ կը նանչցուի. ցոյց կու տայ նաեւ Ս. Պետրոսի հառաչանաց վանքը՝ որու մասին արդէն գրած ենք. առաջինը տեղն է Ս. Պետրոսի ուրացման, իսկ երկրորդը՝ զոյման: Իսկ յիշատակարանը՝ որ այսպէս շատ պարզօրէն երկու եկեղեցիներու տեղը կը նշուի՝ լալտի հարուած մը կու տայ անոնց՝ որ կը հակառակէն յայտարարել քէ՛ Հայոց Ս. Փրկիչ եկեղեցին Կայիափայի տան տեղւոյն վրայ չէ շինուած, վերջին դարերու գործ է ըսելով, եւ Կայիափայի տան տեղը ցոյց կու տայ Պետրոսի հառաչանաց տեղւոյն վրայ. մինչ երկուքն ալ Զ. դարէն առաջ գոյութիւն ունէին արդէն ինչպէս յայտնի է յիշատակարանէն, եւ երկուքն ալ կը վերաբերէին Հայոց. ահա ուրեմն այլ եւս ի նպաստ Հայոց վնասուած կը նկատուի այդ տներէ կենդանուած խնդիրը (Տե՛ս Cabrol-Leclercqի *Dict. d'Archeologie chretienne et de Liturgie*, էջ 2344-2346, բառն *Jérusalem*).

Երուսաղէմի մէջ երբ կային հայկական քաղեր, կային ուրեմն բազմաքիւ հայ վանքեր՝ որ շինուած էին բիւզանդական շրջանին, Դ-Թ. դարերուն. անոնք կառուցուած էին Հայոց սեպհական Ս. Տեղերու եւ նահատակաց գերեզմաններուն եւ կամ անոնց նշխարներուն ամփոփուած տեղերուն վրայ, պահելով հանդերձ հայ խցաւոր մենակեացներու խրնիքները, որոնք՝ ըստ Պաղեստինի սովորութեան՝ հաստատ կը մնային վանքերու կառուցումէն վերջ, ինչպէս յիշեցինք: Հայկական վանքերու գոյութեան կը վկայեն 1. նորագիւտ Հայկական մոզայիք արձանագրութիւններ, 2. Մովսէս Կա-